

ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Հայաստանի Հանրապետություն

Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագիր

Վարկի No. 8229-AM

Պայմանագրի անվանումը՝ Ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերում

Հղում No. (ըստ Գնումների պլանի)՝ 4

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկային միջոցներ Կենսական Նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի ծախսերը ֆինանսավորելու նպատակով և մտադիր է այդ գումարից կատարել Ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերում: Այս պայմանագիրը իրականացվելու է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացն իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված կանոնների և ընթացակարգերի պահանջների համաձայն:
2. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը հրավիրում է ներկայացնելու փակ հայտեր՝ իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից Ավտոմոբիլային տրանսպորտի երթևեկության ինտենսիվության հաշվիչների ձեռքբերումն իրականացնելու համար:
3. Մրցույթը կիրականցվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված և 2011թ. հունվարին հրապարակված «Ուղեցույցներ: ՄՋՎԲ վարկերին ՄՋԸ փոխառությունների և դրամաշնորհների շրջանակներում վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ» ուղեցույցներով (Գնումների ուղեցույց) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ միջազգային մրցակցային մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի լրումն, խնդրում ենք անդրադառնալ 1.6 և 1.7 կետերով սահմանված շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:
4. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ից, vardan.karapetyan@tpio.am; astghik.sahakyan@tpio.am; hasmik.ordukhanyan@tpio.am: Ի լրացումն հայտնում ենք, որ մրցութային փաստաթղթերը ներբեռնվել են նաև www.gnumner.am կայքում, մասնակիցները կարող են բեռնել նաև կայքից, սակայն պատվիրատուն պատասխանատվություն չի կրում մրցութային փաստաթղթերի լիարժեք բեռնման համար:
5. Հետաքրքրված իրավասու հայտատուների կողմից ամբողջական մրցութային փաթեթը անգլերեն լեզվով կարելի է ձեռքբերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 105 ԱՄՆ դոլար) գումար վճարելու պարագայում: Նշված գումարի վճարման եղանակն է՝ բանկային փոխանցումը հետևյալ հաշիվներին.

Շահառու. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության

**«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
ՀՀ դրամի համար. հաշիվ #900000908096
ԱՄՆ դոլարի համար. հաշիվ #900000908104
ՀՀ Կենտրոնական բանկ**

Մրցութային փաստաթղթերը կառաքվեն փոստով՝ Երևանից դուրս առաքելու համար և առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում: Երևանից դուրս առաքելու դեպքում առաքման համար կգանձվի լրացուցիչ 120,000 ՀՀ դրամ (կամ համարժեք 250 ԱՄՆ դոլար):

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **մինչև 2017թ. մայիսի 12-ը, ժամը 11:00:** Չի թույլատրվում ուղարկել հայտերը էլեկտրոնային փոստով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտեր կբացվեն **2017 մայիսի 12-ին, ժամը 11:05** (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով:

7. Հայտը պետք է ուղեկցվի Մրցութային մասնակցելու երաշխիքով՝ **5000 (հինգ հազար) ԱՄՆ դոլար:**

8. Վերևում նշված հասցեն է՝

«Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ
պրն. Վ. Կարապետյանին, «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն»
ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

ՀՀ, Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 3-րդ հարկ

Հեռ.՝ +374 12 20-10-09, +374 12 20-10-10

Էլ. Փոստի հասցե՝ yardan.karapetyan@tpio.am; astghik.sahakyan@tpio.am;

hasmik.ordukhanyan@tpio.am